

վանքի համար, խնզրեց վեհու Հայրապետից
օրհնութեան կոնդակ շնորհել նույնատուին:

17. Դեկտ.—Վաղարշապտատի թնակիչ Ձա-
ֆար Դուլի Միրզա Մահմադ Օղլի փափազ
յայտնած լինելով մանել Հայաստանեաց Ս.
Եկեղեցու ծոցը, Մինօղը հրամացեց Վաղար-
շապտատի գործակալին այս մասին հարկաւոր
վկայականը և կառավարչական հաստատու-
թիւնը մատուցանել Մինօղին:

17. Դեկտ.—Մինօղը հրամացեց Երեանի
Հայոց Կոնսիստորիային, որ Ալեքսանդրա-
պօլի 8. Միհրոր քհ. Դիւլումեանցին ու-
ղարկէ Միրիր՝ հոգեոր հովուութեան հա-
մար, այս մասին ծանուցանելով նաև Աս-
տրախանի թեմի առաջնորդին:


17. Դեկտ.—Ծփխիսից Եազոր Յովուշ-
փեան իր կնոջ Սոփիայի անրարցական կեանքի
պատճառով ամուսնալութութիւն էր խնդրած,
որը Վրաստ. և Խմբեթի թեմի կոնսիստորիան
մերժել էր. Մինօղը յետ քննութեան հրա-
մացեց լուծել նոյն պսակը և թոյլ տալ նորան
մասնել ի նոր ամուսնութիւն:

17. Դեկտ.—Կաթողիկու Հի օրիորդ Էմ-
մանուէլա Քրէսցիչիա Խօհաննա Սոփիա
Դրիգորեան Աքիմեանցը ցանկացած լինելով
մանել Հայաստանեաց Ս. Եկեղեցւոյ ծոցը պա-
տուիրեց Վրաստ. և Խմ. վիճ. կոնսիստո-
րիային յարգել նրա խնդիրքը:

22. Դեկտ.—Տաճիկ Քեարբալա Աղդա-
դազի Մահմարամ Օղլի փափազ յայտնած
լինելով մկրտուել հայ. Ս. Եկեղեցւոյ ծէսով,
Հարաբաղի կոնսիստորիան դիմած էր Մինօ-
ղին. Մինօղը հրամացեց նոյն կոնսիստորիա-
յին ուղարկել յիշեալի խնզրազիլին և մի
քանի անձերի վկայութիւնը:

24. Դեկտ.—Ալեքսանդրապօլիցի Հմա-
յեակ Դեօրգեանի կինը Հեղինէ ապօրինի
կենացութիւն ունենալով ուրիշների հետ,
Մինօղը հրամացեց լուծել պսակը և թոյլ
տալ Հմայեակին կրկնն ամուսնանալ:

24. Դեկտ.—Աստրախանի թեմի առաջ-
նորդ Դեր. Արխուտիէս արքեպոս. քահանայ
ձեռնազրած լինելով Բէզկուիեանցին՝ որը վիճ-
շէր առարտած զինուորական ծառայութիւնը,
Մինօղը հրաւիրեց նրան ի զբուշութիւն և
այս մասին զբեց նաև Սատրոպոլի պր.
Նահանգապետին:



ԿՐՈՆԱԿԱՆ

ՆԱԽԱՌԱՋԻ ԹԻՄ

«Զի ուր նես եւ նախամձական անդա-
մեկագույքին եւ ամենայն իշխանութեանը թակուր. Գ.

«Գիշերն մերժեցաւ և ախոն մերժեցաւ...
ով մարդ, թօթուել քունը ոչքերիցգ, ոսքի
եւ գալնան առաւօս է, աղօթարանը կուակ է
կարել, հնոց զարձել, Վեր կաց, լուսարացի
անուշիկ զեփիւան թող գայ, շոյ, ճակապ,
վեր բարձրացնէ ծանրացած արտեանունքներդ,
բացուն աչքերդ ու տեսնես Ստեղծողի գառ-
ատակիրտը—բնութիւնը, որ քո օրօրանդ է:
Հոգուդ աչքն էլ բաց, հերիք է ժանդառած
փականքներով կաշկանդես միաքղ. բաց զայն,
հրաշալիաց բնութիւնը իւր հովով սթափեց-
նում է քեզ, ետեւն լուսոյ ծառագայթ զբա-
կելու իւր կապուտակ ծոցէն, որ միրտդ մտնի,
խոշեր յուզէ պնակել և զու լուս ու մուտ-
խոչ անձնատուր լինիս երկնից լսագահիր լու-
սով քննելու բնութիւնն ու քեզ՝ որպէս զի
կատարուի ամէնէն զժուար պատուէրն իմաս-
տունի թէ «ծանիլը զքեկզ»:

Ծանիր զքեզ. որչափ զժուարին բան,
որպիսի խորին զիտութիւնն իրրե մի մատադ
տունկ, իրրե մի անզօր մանուկ աշխարհ ես
զալիս մի քանի տասնեակ տարի ծանտագար-
հորդելու Ռեզիդնացութեանդ մէջ հսկաց-
կան գործեր ես կատարում. վոքրիկ զիմիդ
մէջ ժողովում ես անցած զարիբի իմաստու-
թիւնը, երեակացութեանդ մի թռիչքով ան-
տեսանելի աշխարհներն ես թեակոխում: Դու-
հանձար ես զու հերոս ես զու հրաշալիք: Բայց
... բայց յանկարծ առջեկ մի փոս է
բացուում ու քեզ, նոյնքան անզօր, նոյնքան
տկար ու թոյլ հսկայիդ կուլ է տալիս: Այս-
պէս զու հրաշալիք ես և զու դատարկու-

թիւն, գու հակայ ես և զու իսկ մարմնացեալ անզօրութիւն, դու ամենայն ինչ ես և ոչնչ ես:

Երբ կեսնքով լի ու պՃնուած՝ արտգաւագավազ կառքով սլանում ես կեանքի անհարթ ասպարիզում — դու գերազանց զարգն ես ըընութեան, երկի ծագիւնը քեզ են նախանձում, երկնից առաղեր խեթ աչքով նայում ես երբ կառքիդ անիւը սանակից գուրս է թռչում ու քեզ ջարգոտում — դու նոյն ես ինչ որ ձեռքի մեջ արորուած փարզը, դու գեղազուրկ տգեղութիւն մ' ես:

Երբ գիտնականի տոկունութեամբ մրատքիդ լապաերի լուսով մի փոքրիկ ճանճ ես ուսումնասիրում, համրում ես մշկիկ, մեկիկ կազմիչ յօդերն, արիւնաբաշխական երակների ու զարկերակների զարմանաբուեստ փուկների ու զդութիւնն, առաստութիւնն ես չափում կշռում — դու գերազանց հնարագետ ճարտարապետ մ' ես իսկ երբ փորձում ես քան մեր աշխարհն առաւել խոչար աշխարհները տեսնել ու չափել անդիտութեան վարագործ փակում — կայեացք — դու անփորձ համբակ մ' ես, ենթագրութիւնների բարձր պարիսպները խարիսխող մի կոյր:

Երբ դու մի համբի առարկայ մասնիկների բաժանելով անվերջ ու անտեսանելի քառակութիւն ես գանում — դու ամենաթափանց ճառագայթ մ' ես, իսկ երբ քո ծագման ու վախճանի վերայ ես մտածում — դու անթափանց խաւոր մ' ես:

Տիեզերքում ուր է քո տեղդու ով մարդ, և հրաշալիք ես և ոչնչութիւն, բայց ոչ մշկն ես և ոչ միւսը, ուր է քո գահք արարածների շարքում:

Թողնենք արտաքինն ու մարդու հոգեկան աշխարհի կենդրունները թեակուսներ, տեսնենք նոյն զուգագիպութիւնը չե՛ թագաւորում այստեղ:

Եղարք իմ սիրելիք, իմաստութեան ոչ մի թագարանում այնքան պայծառ, այնքան պարզ, այնքան մեկն հանդիսացած չե՛ մարզը իւր վեհութեամբն ու ստորութեամբ, իւր վեհանձութեամբն ու շարութեամբ, իւր շրջանալ վայելլութեամբ ու իւր զազիր հակում-

ներով, — այս ոչ մի տեղ, ինչպէս ու Աւետարանի մէջ, ինչպէս Փրկիչ Աստուծոյ երկրաւոր կեանքի վերջին օրերի հանդիսարանում Այսօր այդ օրերի նախադուռն է, Դուք փոքր իշատէ զիտէք այդ չքնազ կեանքի նկարագիրը, վասն զի քրիստոնեայ անունն էք կրում: ուստի ես միայն կհամեմատեմ այստեղ վսկեւթիւնն ու անկումը մարդուն:

Յիսուս շրջում է աւերակ սրտերով ցանուած գաշտերն Հրեաստանի բեկորներ ժողովում սրտեր շինում: Դուիրները խորհում են և երկնաւոր ըրտի մարմինն էլ աւերակ գարձնել:

Հոգուապետն Յիսուս սիրոյ սրնդի ձայնով է առաջնորդում հօտը, օրէնսդուտ փարիսեցիք ատելութեան թոյն են նիւթում նորա համար:

Թողութեանց թիշկն երկնաւոր յանձինս անբարյա կոչ է տիսում թեւէն ըրունում վեր է հանում: թերութեանց մէջ թաղուած փարիսեցիք սխալական կոչ վերայ կարստեան քարեր են բարձրացնում:

Յիսուսն իրեւ սրտերի թագաւոր նրաւագիմն է մանում: ամրօխն սվասնայ է կանչում: կարծելով թէ նոր թագաւորը սըրով է աշխարհ գայիս: Յիսուսն ուզում է սրտերի ազատութիւն քարոզել: ամրօխն ոյժ է պահանջում: առանց հասկանալու թէ սրով խլուածը սրով կպահուի միայն և սրով էլ յետ կիլուի:

Յիսուսն անդամալոյծին է թժկում: անդամալոյծը նորան ապատի զարնում:

Յիսուսն յաւիտենական կեանք է խոստում սիրելի Յուդային: Յուդան 30 արծաթով ծախում է այդ կեանքն ու վարդապետութիւնը:

Յիսուսն իւր հայրենիքի ախտերն սիրոյ սրբիչ ցօղով է սրտկում: հայրենիքը Նորան վշով պակում: ապատի ձաղկում:

Յիսուսն իւր հայրենի տաճարում զոհ է ըերում իւր սիրած, ամրօխը տաճարի զրանլուտներն է թափում նորա զիխին:

Յիսուսն ուզում է խարիսուլ Երուսաղէմը շինել: ամրօխը նորա մարմնաւոր շէնքը խաչի վերայ զարկելով փշում:

Տեսաք ինչ է մարզը, հրեշտակ և զա-

զան, լոյս և խաւար. մի թափանցիկ պարզութիւն, մի անթափանց պղտորութիւն. մի ծաղկավառ լեռանց մի մթին ձորակ, մի անվերջ անուշչուռութիւն, մի մշտական գարշահուռութիւն, մի զիրկ վարդ, մի դաշտ փուշ, կեանք և մաշ:

Արդ խորհրդածութեան առնենք. ո՞րն է այն աղբիւրը Շարգու սրտի մէջ, որ թոյն է ժայդքում ու թունաւորում ուր ու խաղաղութիւն բղխող աղբերց անուշահամ վրակը: Այդ թունահոս աղբեր անունը նախանձ է:

Բայց ի՞նչ է նախանձ, որոշակի պատասխանի կարող չեմ վասն զի ինչպէս մի փոքրիկ իր զիշերուայ անթափանց փարագուրի ներքեւ՝ ոյնպէս ծածկուած է նախանձի արմատը մարդու սրտի խորքում: Սակայն չեմ հրաժարուի բանալ ձեր մաքի առջեւ այն, ի՞նչ որ նշմարելի է նախանձի ներքոյ:

Մարդս մէկ անրացատրելի հակումն աւնի ուրիշի երեակայութեան մէջ ասպիւլու, մերձաւորի հիացմունքը շահելու. այդ է պատճառս որ շատ անգամ մարդիկ կամաւորութեամբ զոհուում են, որ մերձաւորների սրբառումն ապրեն: Կենցանի մնալ ու այլոց սրբահերումն ապրելու համար չնորհք, չնորհալիութիւն պէտք է ունենալ վասն զի երեակայութեան մէջ չնորհն է անմահանումն երեւակայութիւնը ոյժին է երկպագու, իսկ չնորհքն ոյժ է, մտաւոր ոյժ, բարոյական ոյժ, գեղարուեստական ոյժ: Այս չնորհներից բաժին ունեցողը անկախած է, որ այլոց սրտերում պիտի ապրի, ուսափ ապրում ու զործում է շիտակ առանց կեղծիքի: Այլ կերպ են փարուում չնորհագուրիկ մարդիկ. նոքա այլոց սրտերում ապրելու համար աշխատում են խորտակել այն սրտերում չնորհատու գեղեցիքի արձանն և նորա, փոխարէն իրենց անտաշ, կոպիտ կոճզը դնել: Ահա անշնորհքութիւնից ծագում է չարախոսութիւն, զրաբարտութիւն և կեղծաւութիւն: Չարախոսում են չնորհքը, որ անշնորհքութիւնը գիրք ունենայ, զրաբարտում են ոյժը, որ անոյժը ոյժով երեայ, կեղծումն իրենց սիրար, սրտէս զի այլոց առջեւ ձեռնակած է անուշահամ գարշահամ վրակը և մարդու սրտը անուշահամ գարշահամ վրակը և մարդու սրտը:

ակք գուք մի մեծ մարդ, չնորհքներով լեցուն որ նախանձեր, զրաբարտէր, կեղծէր և չարախոսէր, երբէք, անշնորհքների, տկարների սիլնքորի վահանն են դոքա: Իսկ շրնորհքն յաղթական է, ինքն է իւր վահանն ու ասպար, ուսափ չնորհալին մաքառում ընկնում է, բայց չի նախանձում: չի ստորանում:

Այսպէս նախանձը անշնորհքութեան և անզօրութեան բերքն է, իսկ կեղծիքը, չարախոսութիւնը, զրաբարտութիւնը: Նախանձի զէնքերն են նայեցէք չնորհաց աղբիւր Փըրկիչ Յիսուսի վերայ ու տեսէք նորա վսեմութիւն, խորհեցէք փարիսեցոց զպրաց, սինլըքոր ամբոխի: Յուգայի վերայ ու տեսէք ըստորութիւնը մարդու որ անշնորհքութեան է, նշանակ, որ վախկոտ նախանձի է բերք:

Շնորհազորեկ նախանձուի հոգին հասկանալու համար մի օրինակ պատմեմ: Արծուին մէկը իւր հզօր թեւերով թռչում սաւառում էր երկնից այն բարձունքներում ուր փայլակներ են ծնանում: Հանգիստ անելու համար նա թողեց իւր անսահման սապարէցն ու կապուտակ երկնքից դէպի վարսացաւ և կանգնեց զիւղի մի տան ցանկապատի վերայ, այնանեղից թռաւ միւս ցանկապատը նոյն բակում մի թիւմայր հաւ իւր ձագերով հպարտ հպարտ զրօնում էր. նա տեսաւ արծուի մի պատից միւսը թռչելիս և գառնալով հարեան հաւին ըսաւ հեղինարար. «Բայ, սանամայր, միթէ արծիւներն արժանի են այզքան գովասանքի, տես ինչքան ցածը են թռչում: միթէ մենք հաւերս պակաս ենք արծիւներից, չէ որ ես էլ կարող եմ մէկ պատից միւսը թռչելու: Հաւի խօսքերը հասան արծուի ականջին, նա հասկացաւ նախանձութեան ձայնն ու պատասխան տուեց. չէ չ, աղէկի, կոկռան հաւիկի իրաւ է որ արծիւներն երրեմն մինչև հաւերի ցածրութեան են իջնում, բայց երբ ես լսել ու տեսել որ հաւերըն արծիւների բարձրութեանն հասնէին.. Ահա նախանձ, ահա չնորհքի ուրացութիւն:

Աւալ, որչափ առաջ է նախանձի հոգը մարդկանց սրտերում, որչափ անհուն նորածնունդ զրաբարտութիւնը: Շորա քանակութիւնն իմաստուն ժողովողն է կշակը. «Դարձայ և արեգակի ներքեւ տեսայ ամէն տեսակ

զրպարտութիւն, զրպարտուածների արտասուք և ոչ ոք կար նրանց միսիթարող, իսկ զրպարտողների ձեռքում ես միայն բռնութիւն տեսայ ու երանի տուի այն մեռելներին, որոնք մեզնից յառաջ հեռացել են այս աշխարհից, բայց աւելի երանի տուի նոցա, որոնք ոչ կենդանի են և ոչ մեռած, այլ աշխարհիք անդամ չեն եկել, որ չեն տեսել չար արարածներին արեգական ներքոյ, և տեսայ մարդկանց աշխատանքն ու կուրութիւնը, մերձաւորների մէջ նախանձ տեսայ, որ ունայնութիւն է և յօժարութիւն հոգւոյ: Ես տեսայ թէ ինչպէս անզգամն պոկում էր իւր միսն և ուտում ա:

Արդ, եղբարք իմ ի Քրիստոս, սիրելիք և անձկալիք, մարդկային սրտի վերայ հրաւի բրդի ձեր ուշադրութիւնը Փրկիչ Յիսուսի կետնքի օրինակներով ու ցոյց տուի ձեզ այն օձ՝ նախանձը որ կծիկ է գարձել մարդու սրտի լաւագոյն անկիւնում: որ և Աստուծոյ սեղանին է տեղի:

Ո՞վ կտայ ինձ այն թովիչ ձայնը, որ թովիչ զայն օձն ու մեր սրտերից դուրս քաշեի: Մ' էկ դեղ կայ միայն, դիմել շնորհների բաշխող Աստուծուն սրտարուղիս աղօթքով և աղիւսել որ նա շնորհաց կաթիլներ սրսկե մեր սրտերում ու ցամքի, չորանայ նախանձի օձն այնտեղ: Մ' ի կասկածէք թէ անշնորհքն աղօթելով շնորհք չի առնի. հազարաւ որ են օրինակներ ուր նախանձոտ անշնորհքութիւնը շնորհալի վեհութեան է փոխուել հաւատով, Զերմ աղօթքի միջոցով:

Ս. Յակոբոս առաքեալի խօսքով իմ ասում ձեզ, եղբարք, «զի ուր հեռ և նախանձ, անդ անկարգութիւն և ամենայն իրք չարք»:

Մարմնացեալն Աստուծած պահոց օրերի շնորհիւ լցնէ մեզ իւր շնորհքով որ մեզ ճանաւնք և հասկանանք թէ նախանձի հողը հերոս չի բերի, նախանձոտ ազգը կեանքի գարուն չունի: Ամէն:

Բենիկ Վարդապետ

ՄՈՒԵԽԻ ԿԵՐԵՒԾ ԸՆՑԵԱԼ *

«Եւ հաւուցից ձեզ փոխանակ ամացն յոր մկրտարակն է չորեակն եւ գրուին և խառնիման:»

Յովիլ, թ. 25:

Դիմումը է պատկեշացնել այն սոսկումը, որով բռնուեցաւ մի հովուակն ժողովութե, որ ապրում էր իւր այդքների և թղեներների շքեւական ներքոյ, և տեսայ մարդկանց աշխատանքն ու կուրութիւնը, մերձաւորների մէջ նախանձ տեսայ, որ ունայնութիւն է և յօժարութիւն հոգւոյ: Ես տեսայ թէ ինչպէս առաջն անգամ նկատեց մորեիսի քիչ քիչ բազմանալը, որ ոկզրում երեւեցաւ հեռու գաշտերում և այդքներում: Մարդկիկ անակընթարթ և գրեթէ մոլոգնած աչքերով նայում էին հորդունի վերայ, և մենք հազիւ կարող ենք երեւակայել նոցա սրտատարով յուղումը՝ այն հեռաւոր սե ըիծը տեմնելիս, որ աւելի և աւելի սպառնալեաք ստուարանում էր և հետզհետէ ստանում էր խացած թուլւալ մառախուղի կերպարանը, որ արագ արագ պատում էր երկինքը և մթնացնում էր:

Եյս սարսափելի աղէտից խոռված Յովիլ մարդարէն սորբովէ խօսքերով նկարագրում է իւր գրքում ժողովրդեան ողբը և նոցա խաւարած գէմքը, նոքա հիմնաւոր պատճառ ունեին լալու համար, մարախից յետոյ եկաւ սովորեալ համար կործանումն, յուսահատութիւնն: Աւելի և աւելի խաւանում էր մէկի խաւարութիւնը: ամսութ մառախուղը պատեց չորս կողմը: Ամէն տեղից լսուում էր մէ աղմաւկ, որ կարծես թէ լեռների գլուխներին ասպատակող կառքերի շալիւնը մնէին: Արեգակը մթնացաւ: իսկ օգը գողաց բազմաթիւ միջատների թեների ստուանունքից: Այն ժամանսակ միայն հասկացան մարդկիկ որ իւրեանց երկրի վերայ մորեիս է թափուել, և թէ զացած աղմուկն ու շարժմունքը՝ գիւղացու համար աւելի սոսկալի թևաւորների արշաւանք է, քան մահուան հրեշտակի թեարկութիւնը:

Բանասաեզծ մարդարէի գրգռուած երեւակայութեամբ մօրեիսը Տէր Աստուծու անընկանելի մեծ զինուուրութիւն է կամ թէ այնպիսի հեծեալների բազմութիւն, որ կրակի պէս ուտում ճառակում է: Ոչ մի սուր չի կարող խոցել նորան, ոչ մի պարփակ կանգուն չի մնայ նորա առաջ: Այս էր մեծ, արագ, թևաւոր, անհամար զօքը, և Աստուծոյ մեծ ճայնը հնչում էր այդ բանակի

* Դարձեալ մի խորոց ժարրադիւ որի ամբողջ ժողովածուն չուտով ի իշխ կը համուի առանձին գրքով: